ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱՐԱՄԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2012

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

НЕРСИСЯН ТИГРАН АРАМОВИЧ

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗБОЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – «Уголовное право и криминология; уголовно-исполнительное право»

ЕРЕВАН 2012

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Առաքելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Եսայան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մարգարյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ դատախազության դպրոց

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թվականի փետրվարի 1-ին ժ. 14^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2012թ. դեկտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավաբ. գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վաղարշյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: к.ю.н., доцент С. Аракелян

Официальные оппоненты: д.ю.н., профессор А. Есаян

к.ю.н., двцент А. Маргарян

Ведущая организация: Школа прокуратуры РА

Защита диссертации состоится 1 февраля 2013г. в 1400 часов на заседании специализированного совета ВАК-а 001 по юриспруденции Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомится в читательном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 28 декабря 2012г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент А. Вагаршян

The general attributes, which characterize the criminological situation of the robberies in the Republic of Armenia are discussed in this thesis as well. In this context author has analyzed the quantitative and qualitative indices of the robberies in the Republic of Armenia. In particular, he notes that in accordance with official statistics of last 10 years in the structure of whole criminality the ammount of robberies is 1.01%, and it is serious problem for armenian society. Consequently it is necessary to undertake all possible mesures for raising the effectivenes of the fight against robberies.

Besides, in this thesis is mentioned, that in the last years the trends of the robberies in the Republic of Armenia are unfavourable. Thus, in the period of 2001-2009 was observed permanent increasing of these crimes, but with some variations. At the same time in 2002, 2005 and 2008 was fixed a gradual decreasing of robberies. But last two years were marked by unprecedented increasing of these crimes.

Connected with the social-demographic peculiarities of robberers is mentioned that 98.4% of the persons who committed robberies in the RA are men, but last years the increasing of the density of women is observed. The most active criminals are 18-24 (43.2%) and 25-30 (30.5%) yeares old persons, then 31-40 (11.2%), 41-50 (8.6%), 14-17 (6.3%) and 50 and older (0.2%). Besides, the density of unemloyeds is more then 50%, persons with steady income – more then 20%, employeds and learners – more then 10%.

About the 70% of robberies in the Republic of Armenia are committed by the repeat offenders. Besides, more then 40% of these crimes are committed in the group.

Some moral-psychological and biophyziological peculiarities of the persons who committed robberies in the Republic of Armenia are discussed in the present paper as well: the value orientations, the needs, the motivation, the diseases.

The results of the research of the criminal cases on robberies reviewed by the courts of the first instance of the Republic of Armenia for the period of 2000-2011 years showed that the person of victims and their behavior have an essential importance in the mechanism of mentioned crimes.

So, according to the oppinion of the author of this dissertation, the victimological prevention is one of the main directions of the fight against robberies.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը: Հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները վերջին տարիներին լրջորեն մտահոգում են ոչ միայն քրեագետներին, այլև բազմաթիվ այլ ոլորտների մասնագետներին: Ներկայիս պայմաններում հանցավոր ամենատարբեր դրսևորումները էական վնաս են պատճառում գրեթե բոլոր պետությունների նորմալ կենսագործունեությանը, խոչընդոտում են սոցիալ-տնտեսական բարեփոխումների բնականոն ընթացքը և ստեղծում լարվածության, տագնապայնության ու անկայունության մթնոլորտ: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բազմաթիվ այլ պետություններում, այդ կապակցությամբ առավել ընդգծվում են հասարակության քրեականացման բացասական միտումները:

Այդ ֆոնի վրա վերջին տարիներին հանրապետությունում արձանագրվում է ընդհանուր հանցավորության (այդ թվում՝ շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող հանցագործությունների) կայուն աճ: Պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում ամենատարածված հանցագործությունները սեփականության դեմ ուղղվածներն են, որոնց կառուցվածքում մտահոգիչ տեսակարար կշիռ ունեն ավազակությունները: Մասնավորապես, եթե 2000թ. ՀՀ-ում գրանցվել է ավազակության 92, ապա 2008-ին՝ 126, իսկ 2009-ին՝ 151 դեպք: Թեև 2010 և 2011 թվականներին գրանցված ավազակությունների թիվը նվազել է, դրանից չի կարելի լավատեսական և հեռուն գնացող հետևություններ անել: Բանն այն է, որ վերջին տարիներին, Հայաստանում տեղի ունեցող սոցիալական, տնտեսական, քաղաքական գործընթացների պայմաններում, ավազակությունները, ինչպես և շահադիտական-բռնի հանցավորության այլ դրսևորումները, բնութագրվում են քանակական և որակական առավել բացասական ցուցանիշներով, հանցավոր վարքագծի զինված, կազմակերպված և մասնագիտացված ձևերի տարածմամբ:

Ստեղծված իրավիճակը, բացի քաղաքական, տնտեսական և իրավական ոլորտներում առկա հիմնական գործոններից, էապես պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության իրավապահական մարմինները (հատկապես՝ ոստիկանությունը) շատ հաճախ թերանում են հանցավորության վերոհիշյալ դրսևորումների դեմ պայքարի գործում: Սակայն տվյալ հանգամանքն էլ, իր հերթին, ունի սուբյեկտիվ և օբյեկտիվ բնույթի բազմաթիվ պատճառներ, որոնք անհրաժեշտ է վերացնել, ուղեփակել կամ չեզոքացնել:

Հասարակական-քաղաքական և կրիմինալոգիական ներկայիս զարգացումներին համընթաց չէ նաև հայրենական քրեաիրավական գիտությունը: Ավազակությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրների համալիր, բազմակողմանի հետազոտություններ Հայաստանի Հանրապետությունում գրեթե չեն իրականացվում: Արդյունքում չեն մշակվում և կենսագործվում նշված հանցագործությունների կանխարգելման գիտականորեն հիմնավորված ու գործնական կարևոր նշանակություն ունեցող նոր մոտեցումներ:

Միևնույն ժամանակ հատուկ հետազոտության կարիք ունեն ավազակությունների որակական և քանակական ցուցանիշները, դրանց նպաստող գործոնները, նշված հանցանքները կատարողների և դրանցից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները, կանխարգելմանն ուղղված առավել արդյունավետ

ուղղությունները, ինչպես նաև ավազակության հանցակազմի օրենսդրական ձևակերպումներն ու հարակից հանցագործություններից հանցավոր տվյալ արարքի սահմանազատման հարցերը:

Վերը նշված հանգամանքները պայմանավորել են ատենախոսական սույն հետազոտության թեմայի ընտրությունը, դրա արդիականությունը և հրատապությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Ավազակությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրներին անդրադարձել են մի շարք գիտնականներ: Մասնավորապես, Ս.Ս. Ալեկսեևը, Յու.Մ. Անտոնյանը, Լ.Դ. Գաուխմանը, Յա.Ի. Գիլինսկին, Պ.Ս. Դագելը, Ա.Ի. Դոլգովան, Վ.Ե. Էմինովը, Վ.Վ. Լունեևը, Ի.Ի. Կարպեցը, Ե.Բ. Կվաշիսը, Վ.Ն. Կուդրյավցևը, Ն.Ֆ. Կուզնեցովան, Գ.Մ. Մինկովսին, Ի.Պ. Պոբեգայլոն, Դ.Ա. Շեստակովը և այլոք: Սակայն այս գիտնականների հետազոտությունների արդյունքները հիմնականում հնացած են և, բացի դրանից, այդ արդյունքները չեն վերաբերում Հայաստանի Հանրապետությանը:

Հանցավորության քննարկվող տեսակին են նվիրված եղել նաև ռուսաստանցի գիտնականներ Դ.Վ. Բարչենկովի, Ս.Ի. Կիրիլովի, Ե.Վ. Նիկիտինի, Վ.Ի. Պլոխովայի, Վ.Բ. Սոլոդկիի, Վ.Մ. Վյունովի, Ռ.Ե. Տոկարչուկի և այլոց վերջին տարիների ատենախոսական հետազոտությունները, որոնք պարունակում են հանցավորության տվյալ դրսևորման հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակակից տեսակետներ: Սակայն դրանք ևս չեն վերաբերում հայաստանյան իրականությանը:

Հայաստանի Հանրապետությունում նշված հիմնախնդրի վերաբերյալ հատուկ ուսումնասիրություններ և հետազոտություններ գրեթե չեն իրականացվել: Դրանց թվում, թերևս, կարելի է առանձնացնել Ս.Վ. Առաքելյանի, Ռ.Զ. Ավագյանի, Ս.Ս. Ավետիսյանի, Ա.Հ. Գաբուզյանի, Ա.Ռ. Մարգարյանի, Գ.Ս. Սարկիսովի, Տ.Վ. Սիմոնյանի, Լ.Զ. Թադևոսյանի աշխատությունները, որոնցում որոշ չափով անդրադարձ է կատարվում նաև ավազակությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրներին:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ սույն ատենախոսությամբ հետազոտության թեման ամբողջապես չի սպառվում, քննարկվող ոլորտի մի շարք հիմնախնդիրներ լուծված չեն կամ լուծված են մասամբ, ուստի այն նաև հետագա ուսումնասիրությունների կարիք ունի:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության **առարկան են** ավազակության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, հանցավորության տվյալ տեսակի վիճակի, կառուցվածքի, շարժընթացի դրսևորումներն ու օրինաչափությունները, ավազակություն կատարողների և դրանից տուժողների անձը բնութագրող հատկությունները, ինչպես նաև քննարկվող հանցագործություններին նպաստող գործոնները և դրանց դեմ պայքարի իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպակառավարչական բնույթի միջոցառումները:

Հետազոտության **օբյեկտը** Հայաստանի Հանրապետությունում ավազակությունների քրեաիրավական և, հիմնականում, կրիմինալոգիական առանձնահատկություններն են, ինչպես նաև շահադիտական-բռնի մոտիվացիայով կատարվող այլ հանցագործությունների ու ընդհանուր հանցավորության հետ դրանց հարաբերակցությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: հետազոտության **հիմնական նպատակը** Հայաստանի Հանրապետությունում ավազակությունների կրիմինալո-

TIGRAN ARAM NERSISYAN

CRIMINAL LAW AND CRIMINOLOGICAL PROBLEMS OF ROBBERY IN THE REPUBLIC OF ARMENIA

RESUME

This thesis is dedicated to the criminal-legal and criminological problems of the robberies in the Republic of Armenia. In this context the results of comparative research of the concept of robbery are submited in this research. Connected to this, legislative peculiarities of the Robbery by the Criminal Codes of the contries of former Soviet Union, as well as the USA, China and many European countries (Germany, France, Spain, Netherlands, Switzerland, Sweden, Denmark) are discussed. Corresponding norms of Muslim criminal law are analysed too.

On the base of comparative research in this article is mentioned, that in the number of developed European countries the robbery is foreseed separately only in the Criminal Codes of Germany and Switzerland. In the other European countries robbery is foreseed by the norms which are regulate responsibility for theft and pillage, commited with violence. The robbery is not foreseed separately in the Criminal Codes of the USA, China and many Muslim countries as well.

The scientific innovation of thesis is that the versatile and detailed analysis of the criminal-legal and criminological problems of robberies is conducted in it for the first time in the Republic of Armenia on the level of the thesis research.

Besides, scientifically substantiated and practically significant proposals on the improvement of the criminal legislation and the application of law in practice in the Republic of Armenia are presented on the basis of the study with the purpose of the increasing of the effectiveness of struggle against the robberies.

The attributes, which characterize the objective and subjective parts of the robbery according to the Criminal code of the Republic of Armenia are discussed in this thesis too.

In this context author has analyzed the corresponding norms of the Criminal Code of the RA and uncovered the certain practical problems. So, he suggests to qualify as a robbery the facts of raiding at illegal ascendants of property as well.

Besides, author indicates that occasionally the trial of robbery is possible too. For example, when riding is committed not at man, but at manikin.

Disputing the subjective attributes of robbery author indicates, that the obligatory attribute of the robbery is the purpose of crime. So, as mentioned in thesis, it is not oblygatory, that the motives of robbery are only venal.

мнению автора, должны квалифицироваться случаи, когда по ошибке нападение совершается не на человека, а на манекен и т.д.

В связи с субъективными признаками отмечается, что обязательным признаком разбоя является цель преступления – стремление похитить чужое имущество. Мотив же не обязательно должен быть корыстным.

В диссертации рассматриваются также общие признаки, характеризующие криминологическую ситуацию, связанную с разбоями. В этом контексте автор анализирует количественные и качественные показатели разбоев в Республике Армения. В частности, в соответствии с данными официальной статистики последних 10 лет удельный вес разбоев в структуре общей преступности составляет 1.01%, а это достаточно серьезная проблема для армянского общества.

Кроме того, в диссертации отмечается, что за последние годы в Республике Армения наблюдаются довольно неблагоприятные тенденции разбоев. Так, за период 2001-2009 гг. фиксируется относительный скачкообразный рост указанных преступлений. В то же время в 2002, 2005 и 2008 годах наблюдается небольшое снижение уровня разбоев. Однако за последние два года отмечается беспрецедентный рост указанных преступлений.

В связи с социально-демографическими особенностями лиц, совершивших разбои в РА, отмечается, что 98.4% из них мужчины, однако в последние годы наблюдается рост криминальной активности женщин. Причем, наиболее активны лица, представляющие возрастные группы 18-24 (43.2%) и 25-30 (30.5%) лет. Далее по мере убывания идут следующие группы: 31-40 (11.2%), 41-50 (8.6%), 14-17 (6.3%) и старше 50 лет (0.2%).

Кроме того, удельный вес безработных составляет более 50%; лиц, имеющих непостоянные доходы – более 20%, а занятых трудовой деятельностью и учащихся – более 10%. Примерно 70% разбоев в РА совершается лицами, ранее привлекавшимися к уголовной ответственности. Более 40% исследуемых преступлений совершаются в составе группы.

В диссертации исследуются также некоторые морально-психологические и биофизиологические особенности лиц, совершивших разбои в РА. В частности: ценностные ориентации, потребности, мотивацию и т.д.

Результаты исследования уголовных дел о разбоях, рассмотренных судами общей юрисдикции РА за период 2000-2011 гг., показывают, что в механизме совершения указанных преступлений значительную роль играют также личность и поведение потерпевших.

Исходя из данного факта, диссертант считает, что одним из главных направлений в деле предупреждения разбоев является виктимологическая профилактика.

գիական և քրեաիրավական հիմնախնդիրների ամբողջական վերլուծությունն է և, դրա հիման վրա, հանցավորության տվյալ տեսակի դեմ պայքարի տեսական, գործնական և օրենսդրական հիմքերի կատարելագործման առաջարկությունների մշակումն ու առաջ քաշումը:

Նշված նպատակների իրականացմամբ է պայմանավորված հետևյալ հետազոտական **խնդիրների** լուծումը՝

- ուսումնասիրել ՀՀ-ում ավազակությունների քրեաիրավական հատկանիշները, ինչպես նաև վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը,
- վերլուծել ավազակության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունները, ՀՀ-ում ավազակությունների մակարդակի, կառուցվածքի, շարժընթացի դրսևորումներն ու օրինաչափությունները, ինչպես նաև ավազակություն կատարողների և նրանց հանցավոր արարքներից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները,
- հետազոտել շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավոր վարքագծի (մասնավորապես՝ ավազակության) զարգացման մեխանիզմի վրա ազդող գործոնների համակարգը,
- բացահայտել ՀՀ-ում ավազակություններին նպաստող գործոնները, դրանց տարածվածությունն ու ազդեցության աստիճանը,
- ուսումնասիրել ազգային հոգեբանության առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը ավազակությունների ցուցանիշների վրա,
- հետազոտել արտասահմանյան երկրների համապատասխան օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան ու դրա հիման վրա իրականացնել Հայաստանի հետ համեմատական վերլուծություն:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն են իմացության դիալեկտիկական, տրամաբանական, անալիզի, սինթեզի, անալոգիայի, պատմաիրավական, համեմատական-իրավական, ձևական-իրավաբանական, վիճակագրական, հասարակագիտական և գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդներ:

Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև հատուկ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ վիճակագրական տվյալների վերլուծության, հարցման, անկետավորման, համեմատական-իրավական վերլուծության և փաստաթղթերի հետազոտության մեթոդները:

Վերը նշված գիտական մեթոդների կիրառումն ապահովել է ատենախոսական հետազոտությանը ներկայացվող համալիր և միջճյուղային մոտեցման պահանջների կատարումը:

Ատենախոսության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության, մանկավարժության, կրիմինալոգիայի, քրեական, քրեակատարողական, քաղաքացիական իրավունքի, քրեական դատավարության ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար աշխատությունները: Օգտագործվել են նաև գիտագործնական համաժողովների, սեմինարների բազմաթիվ նյութեր:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատա-

վարության օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օերնսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և այլ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև արտասահմանյան տարբեր երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Դանիայի, Իսպանիայի, Նիդերլանդների, Շվեդիայի, Չինաստանի, ԱՄՆ-ի և մուսուլմանական որոշ երկրների քրեական օրենսգրքերը:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետության տարբեր ատյանների դատարաններում 1998-2010թթ. ընթացքում քննության առարկա դարձած ավազակությունների վերաբերյալ 150 քրեական գործերի ուսումնասիրության արդյունքները: Ընդ որում, ինչպես յուրաքանչյուր քրեական գործի, այնպես էլ յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ լրացվել են առանձին, նախապես մշակված և պատրաստված անկետաներ, որոնց տվյալները հետագայում խմբավորվել, ամփոփվել և վերլուծվել են, իսկ արդյունքում՝ օգտագործվել ատենախոսության մեջ:

Միևնույն ժամանակ, սույն ուսումնասիրության արդյունքների ներկայացուցչականությունը և իրականացված ատենախոսական հետազոտության հետ համադրելիությունն ապահովելու նպատակով ուսումնասիրվել, վերլուծվել և օգտագործվել են հանցավորության քննարկվող տեսակի վերաբերյալ այլ տարածաշրջաններում և այլ հեղինակների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտվող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության գնահատման նկատառումներով նախապես մշակված ծրագրով համապատասխան հարցազրույցներ են անցկացվել իրավապահպան մարմինների 50 աշխատակիցների, հասարակական կազմակերպությունների 20 ներկայացուցիչների և ավազակությունների համար դատապարտված 30 անձանց հետ:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական գիտության մեջ ավազակությունների կրիմինոլոգիական և քրեաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ կատարված առաջին համակողմանի, համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսական սույն հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել և կիրառվել հասարակության և պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝

- օրինաստեղծ գործունեության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համալիր ծրագրերի մշակման ժամանակ,
- հանցավորության և, հատկապես, ավազակությունների հիմնախնդիրներին վերաբերող գիտական հետազոտություններում,
- գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ իրավաբանական և այլ բուհերում քրեական իրավունք և կրիմինալոգիա դասավանդելիս,

НЕРСИСЯН ТИГРАН АРАМОВИЧ

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗБОЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена уголовно-правовым и криминологическим проблемам борьбы с разбоями в Республике Армения. В этом контексте представлены результаты сравнительного исследования понятия разбоя по уголовному законодательству РА и зарубежных стран. В частности, рассмотрены особенности законодательного закрепления состава разбоя по УК стран бывшего Советского Союза, а также США, Китая, Германии, Франции, Испании, Нидерландов, Швейцарии, Швеции, Дании и соответствующие нормы мусульманского уголовного права.

На основе сравнительного исследования отмечается, что в ряду развитых европейских стран разбой выделяется в самостоятельный состав только в УК Германии и Швейцарии. В других европейских странах разбой отдельно не предусмотрен. В данном случае речь о кражах и грабежах, совершенных с применением насилия. Разбой не предусмотрен самостоятельным составом также в уголовном законодательстве Китая, США и ряда мусульманских стран.

Научная новизна диссертации состоит в том, что в ней впервые в Республике Армения на уровне диссертационного исследования проведен всесторонний и подробный анализ уголовно-правовых и криминологических проблем разбоев.

Кроме того, с целью повышения эффективности борьбы с указанными преступлениями на основе исследования представляются научно обоснованные и практически значимые предложения по совершенствованию уголовного законодательства и правоприменительной практики Республики Армения.

Рассматриваются также объективные и субъективные признаки состава разбоя, предусмотренного УК РА. В данной связи осуществлен анализ соответствующих законодательных предписаний и выявлены определенные проблемы, связанные с практикой их применения. В частности, рассматривая вопросы, связанные с предметом исследуемого преступления, автор предлагает квалифицировать как разбой также случаи сознательного нападения на незаконного владельца имуществом. Как покушение на разбой, по

– ավազակության համար պատիժ կրող անձանց ուղղման հատուկ միջոցառումների իրականացում,

– ավազակությունների վիկտիմալոգիական կանխարգելում:

7. Կարևոր դերակատարություն կարող են ունենալ ոստիկանության մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնք ուղղված են ավազակությունների պատճառներն ու պայմանները բացահայտելուն, չեզոքացնելուն, ուղեփակելուն, ինչպես նաև նման հանցագործություններ նախապատրաստող և իրականացրած անձանց մերկացնելուն և քրեական պատասխանատվության ենթարկելուն:

8. Կարևորվում է նաև «ֆոնային» հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելը: Տվյալ դեպքում խոսքը երկակի կանխարգելիչ քաղաքականության մասին է: Մասնավորապես, ավազակությունների կանխման իմաստով անհրաժեշտ է անզիջում պայքար մղել զենքի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ: Էական նշանակություն կարող է ունենալ նաև կազմակերպված հանցավոր խմբավորումների բացահայտմանը, դրանց ղեկավարների չեզոքացմանն ու այլ մասնակիցներին քրեական պատասխանատվության ենթարկելուն ուղղված գործունեությունը:

9. Քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի կարևորագույն խնդիրներից է նաև հանցավոր տարրերի, հանցավոր ապրելակերպի, բռնության, սպառողական հոգեբանության նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորումը:

10. Ավազակությունների հատուկ կանխման առումով կարևոր նշանակություն ունեն վիկտիմալոգիական բնույթի միջոցառումները, որոնք նախ և առաջ կապված են բնակչությանը նշված հանցագործությունների առավել տարածված եղանակների և վայրերի, ինչպես նաև դրանցից խուսափելու կամ պաշտպանվելու հնարավոր միջոցների մասին տեղեկացնելու հետ:

11. Կանխարգելիչ ոչ մի միջոցառում չի կարող հաջողությամբ պսակվել, եթե չհենվի հասարակության ամենալայն աջակցության վրա: Այդ պայքարի գործում չեն կարող որևէ նշանակալի դերակատարություն ունենալ նաև միայն քրեական օրենքները, որքան էլ խիստ և կենսունակ դրանք լինեն: Հասարակության անտարբերության, դրա ներկայացուցիչների կողմից իրենց քաղաքացիական պարտականությունները չկատարելու պայմաններում այդ օրենքների անարդյունավետությունն ու անզորությունն առավել ակնհայտ են դառնում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ավազակության սահմանազատումը հարակից հանցագործություններից // Պետություն և իրավունք, 2010, № 4 (50), էջեր 31-38:

2. «Ավազակություն» հասկացությունն ըստ Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության // Պետություն և իրավունք, 2010, № 9 (49), էջեր 62-69:

3. Ավազակության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների հետ կապված որոշ հիմնախնդիրների մասին // Պետություն և իրավունք, 2011, № 4 (54), էջեր 27-39:

4. Ավազակությունների ընդհանուր կրիմինալոգիական բնութագիրը // Դատական իշխանություն, 2012, № 10 (159), էջեր 52-59:

•իրավակիրառական (օպերատիվ-հետախուզական, քննչական և դատական) պրակտիկայում՝ ավազակությունների պատճառների և նպաստող պայմանների բացահայտման և այդ հանցագործությունների կանխման միջոցառումների մշակման ու իրականացման նպատակով,

•մեթոդաբանական և կիրառական այլ նպատակներով:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են ՀՀ ոստիկանության ակադեմիայում, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև ներկայացված են ատենախոսության թեմայով հրապարակած և դրա բովանդակությունն արտացոլող 4 գիտական հոդվածներում:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության գիտական նորույթը, նախ և առաջ, պայմանավորված է ավազակությունների քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրների տեսական ոչ ամբողջական մշակվածությամբ: Մի շարք այնպիսի հարցեր, ինչպիսիք են Հայաստանի Հանրապետությունում ավազակությունների ժամանակակից վիճակը, կառուցվածքը, շարժընթացն ու միտումները, այդ հանցագործություններին նպաստող գործոնները, ինչպես նաև ավազակություն կատարողի և նրա արարքից տուժողի անձը բնութագրող առանձնահատկությունները, նշված հանցագործությունների կանխարգելման անհրաժեշտ ուղղությունները և այլն, ներկայումս շատ քիչ են ուսումնասիրված: Կատարելագործման լուրջ կարիք ունի ՀՀ քրեական գործող օրենսդրությունը:

Բացի դրանից, աշխատանքում հայկական իրավագիտության պատմության մեջ առաջին անգամ ատենախոսական մակարդակով և համակարգային, համալիր մոտեցման հիման վրա իրականացվել է ավազակությունների տեսական և գործնական հիմնախնդիրների հետազոտություն: Դրա հիման վրա առաջ են քաշվել Հայաստանի Հանրապետությունում ավազակությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝**

1. Ավազակության հանցակազմի օրենսդրական ներկայիս սահմանումը կատարելագործման կարիք ունի հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) Տվյալ հանցագործության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է ավազակության սահմանումը ոչ թե որպես ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, այլ՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հափշտակություն:

բ) ՀՀ քր. օր.-ում անհրաժեշտ է բացահայտել «կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն» հասկացության բովանդակությունը: Մասնավորապես, առաջարկվում է տվյալ հասկացության հետևյալ սահմանումը՝ «Կյանքի կամ առողջության համար վտանգավոր է համարվում այն բռնությունը, որն առաջացրել է տուժողի մահ կամ ծանր կամ միջին ծանրության, կամ թեթև վնաս է պատճառել նրա առողջությանը, ինչպես նաև այն բռնությունը, որը չի առաջացրել այդ հետևանքները, բայց գործադրման պահին դրանց առաջացման իրական վտանգ է

ստեղծել»: Ընդ որում, ֆիզիկական բռնությունն իրենից ներկայացնում է հանցավորի կողմից ինչպես իր մկանային ուժի, այնպես էլ օգտագործվող այլ միջոցների (մեխանիզմների, կենդանիների, քիմիական նյութերի, այլ անձանց և այլն) հատկությունների գործադրում: Ֆիզիկական բռնության եղանակներ են համարվում նաև տուժողին ֆիզիկական վնասի պատճառումը գաղտնի, խաբեությամբ կամ նրա վստահությունը չարաշահելով: Իսկ հոգեկան բռնություն ասելով՝ ավազակության հանցակազմի իմաստով պետք է հասկանալ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը, որը տուժողն ընկալում է որպես իր կամ մեկ այլ անձի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ներկայացնող:

գ) Քր. օր.-ի բոլոր այն հոդվածներում, որտեղ հարձակումը նախատեսված է որպես հանցագործության եղանակ, անհրաժեշտ է հրաժարվել «հարձակում» եզրույթից և փոխարինել այն «բռնություն», «բռնություն գործադրելու սպառնալիք» կամ, ըստ անհրաժեշտության, «ուրիշի գույքի ոչնչացում կամ վնասում» և «ուրիշի գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք» հասկացություններով: Այն դեպքերում, երբ այդ փոխարինումը հնարավոր չէ, անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ բացահայտել «հարձակում» հասկացության բովանդակությունը (օրինակ՝ քր. օր.-ի հոդված 365-ում և այլն):

դ) Հաշվի առնելով խմբակային հանցավորության (այդ թվում՝ խմբի կողմից կատարվող ավազակությունների) առավել բարձր հանրային վտանգավորությունը՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ի 2-րդ մասի 1-ին կետն անհրաժեշտ է փոփոխել: Տվյալ կետով պատասխանատվություն պետք է սահմանել ավազակության համար, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, այդ թվում՝ առանց նախնական համաձայնության:

ե) ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ի 2-րդ մասի 4-րդ կետում զենքից բացի անհրաժեշտ է նախատեսել նաև պայթուցիկ նյութերն ու պայթուցիկ սարքերը, իսկ որպես զենք օգտագործվող այլ առարկաների շարքը պետք է դասել, այդ թվում՝ դյուրավառ հեղուկները և ուժեղ ներգործող թունավոր նյութերը: Միաժամանակ զենք ասելով՝ ավազակության հանցակազմում պետք է հասկանալ բոլոր այն սարքերը և առարկաները, որոնք իրենց կառուցվածքով նախատեսված են կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ ազդանշան արձակելու համար և որևէ վտանգ են ներկայացնում մարդու կյանքին կամ առողջությանը (այդ թվում՝ օդաճնշիչ, գազային, ազդանշանային զենքը):

զ) Տեսական և իրավակիրառական բազմաթիվ խնդիրներից ու բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ի 4-րդ մասը լրացնել նոր պարբերություններով, որոնցում հստակ կսահմանվեն «բնակարան», «պահեստարան», «շինություն», ինչպես նաև «մուտք գործել» հասկացությունները:

2. Ավազակության քրեաիրավական որակման հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը կարող է նպաստել հետևյալ առանձնահատկությունների հստակ պարզաբանումը.

ա) Քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է միայն նպատակը: Ուստի տվյալ հանցագործության որակման համար որևէ նշանակություն չունի արարքի կատարման շարժառիթը: Ավազակությունը կարող է կատարվել ինչպես շահադիտական, այնպես էլ այլ (ոչ շահադիտական) շարժա-

տնտեսական շերտավորումը, որը վերջին տարիներին Հայաստանում հասել է անանախադեպ չափերի:

9) Ավազակություններին նպաստող առանձնահատուկ գործոնների շարքում հատկապես աչքի են ընկնում հետևյալները՝

– տարբեր միկրոմիջավայրերում (ընտանիքում, ընկերական շրջապատում, ուսման և աշխատանքի վայրերում) շահադիտական-անհատապաշտական մոտիվացիայի ձևավորումը,

– հասարակությունում առկա բարոյահոգեբանական մթնոլորտի վատթարացումը և շահամոլության, մորթապաշտության հոգեբանության տարածումը,

– հատկապես անչափահասների և երիտասարդների շրջանում հակահասարակական կենսակերպի խթանումը, արժեքային կողմնորոշումների դեֆորմացումը և ալկոհոլամոլության, թմրամոլության ու խաղամոլության տարածումը,

– բնակարանների, պահեստարանների և շինությունների տեխնիկական թույլ պաշտպանվածությունը,

– հանգստյան տներում, հյուրանոցներում, շենքերի բակերում կողմնակի, անծանոթ անձանց նկատմամբ հսկողության անբավարարությունը կամ ընդհանրապես բացակայությունը,

– հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի իրացման դեմ պայքարի թերություններն ու բացթողումները,

– քաղաքացիների անշրջահայաց, անտարբեր, անբարեխիղճ վերաբերմունքը սեփական գույքի պահպանությանը:

10) Հետազոտության արդյունքում առանձնացվել են նաև ավազակություններին բնութագրական նպաստող իրադրությունների հետևյալ չորս տեսակները՝ 1) վիկտիմային-պրովոկացնող, 2) օբյեկտիվորեն նպաստող, 3) չեզոք և 4) հատուկ նախապատրաստվող:

5. Ավազակությունների կանխման առումով էական նշանակություն կարող են ունենալ ընդհանուր-սոցիալական հետևյալ միջոցառումները՝

– տնտեսական ճգնաժամի հաղթահարումը և իրական արժեզրկման մակարդակի նվազեցումը,

– բնակչության բեռնաթափման մեղմումը, գործազրկության մակարդակի նվազեցումը և անապահով ընտանիքների կենցաղային պայմանների բարելավումը,

– թափառաշրջիկության և մուրացկանության դեմ պայքարի ուժեղացումը և այլն:

6. Ավազակությունների հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման միջոցառումները պետք է իրականացվեն հետևյալ ուղղություններով՝

– սոցիալական հսկողության ապահովում այն անձանց նկատմամբ, ում վարքագիծն ու առանձնահատկությունները վկայում են նրանց կողմից շահադիտական-բռնի հանցանք կատարելու հնարավորության մասին,

– վարչական հսկողություն նախկինում նման հանցանքներ կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ,

– օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ուղղված նախապատրաստվող ավազակությունները և դրանց հավանական կատարողներին բացահայտելուն, ինչպես նաև դրանք կանխելուն կամ խափանելուն,

– կատարված ավազակությունների բացահայտում և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ապահովում,

ված է ավազակների՝ հանցավոր նպատակին անպայմանորեն հասնելու ձգտմամբ: Բանն այն է, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության կամ դրա սպառնալիքի գործադրման ազդեցության տակ տուժողները պատրաստ են լինում տրամադրելու պահանջվող գույքը և հստակ մատնանշում են նյութական տարբեր արժեքների թաքստոցները կամ գտնվելու այլ վայրերը՝ դրանով իսկ ապահովագրելով իրենց կամ իրենց հարազատների կյանքն ու առողջությունը:

3) Հայաստանում, ինչպես և բազմաթիվ այլ երկրներում, ավազակություն կատարողների կազմում տղամարդիկ զգալիորեն գերակայում են: Սակայն վերջին տարիներին նկատվում է կանանց մասնաբաժնի աճի միտում: Եթե ընդհանուր հանցավորության կառուցվածքում վերջին տասնամյակում ՀՀ-ում հանցանք կատարած տղամարդկանց մասնաբաժինը 90.5% է, ապա ավազակություն կատարողների կազմում՝ 98.4%:

4) Ավազակություն կատարողների պահանջմունքները մեծ մասամբ (ավելի քան 80%-ի մոտ) կապված են եղել թանկարժեք իրեր, զարդեր, դրամ, կենցաղային նշանակության տարբեր առարկաներ, հագուստ ձեռք բերելու հետ: Նրանց 15%-ի նյութական պահանջմունքները կապված են եղել ալկոհոլ կամ թմրանյութ ձեռք բերելու կարիքները բավարարելու հետ: Սակայն քննարկվող կատեգորիայի անձանց միայն 10%-ն է իրականում ծայրահեղ կարիքավոր եղել: Միևնույն ժամանակ ՀՀ-ում ավազակությունների ավելի քան 70%-ը կատարվում են շահադիտական դրդումներով: Մնացած դեպքերում հանցանքը կատարվել է վրեժի (10%), ինքնահաստատման (8%), «գողական դրամարկղը» համալրելու (5%) և այլ շարժառիթներով:

5) Ավազակություն կատարողների 68.7%-ը նախկինում դատապարտված են եղել տարբեր հանցագործությունների համար: Ընդ որում, վերջիններիս ավելի քան 90%-ը դատապարտված են եղել գույքային բնույթի (հիմնականում՝ հափշտակությունների), իսկ մնացած մասը՝ բռնությամբ զուգորդված հանցագործությունների՝ առողջությանը ծանրության տարբեր աստիճանի վնաս պատճառելու, սպանության (այդ թվում՝ սպանության փորձի), մարդուն առևանգելու կամ խուլիգանության համար: Նախկինում դատապարտվածների կողմից կատարվող ավազակություններն աչքի են ընկնում տուժողների կյանքի կամ առողջության համար առավել մեծ վտանգավորությամբ:

6) Ավազակություններից տուժողների շարքում չկան մահացածներ, իսկ անչափահասները շատ հազվադեպ են հանդիսանում քննարկվող հանցագործություններից տուժողներ: Միևնույն ժամանակ, թեև, մահացած տուժողներ չեն եղել, սակայն բազմաթիվ են նրանց առողջությանը ծանրության տարբեր աստիճանի վնաս պատճառելու դեպքերը:

7) Ավազակները, որպես կանոն, տարբեր աղբյուրներից քաջատեղյակ են լինում տուժողի մոտ (տանը, գրասենյակում, հագուստի մեջ, ձեռքին և այլն) նյութական արժեքների առկայության մասին: Հազվադեպ չեն այն դեպքերը, երբ տուժողն ինքն է հանդիսանում տեղեկատվության արտահոսքի աղբյուր (օրինակ՝ մտերիմների հետ կամ այլ անձանց ներկայությամբ զրույցի ընթացքում և այլն):

8) Աղքատությունը, հասարակության բևեռացումը հանցավորության, հատկապես՝ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների, հզոր դետերմինանտներ են: Սակայն աղքատությունը ինքնին դեռ չի կարող համարվել հանցավորությունը պայմանավորող հիմնական և գլխավոր գործոն: Այս առումով առավել մեծ հանցածին ծանրաբեռնվածություն է կրում բնակչության սոցիալ-

ռիթներով (օրինակ՝ վրեժի): Կարևորն այն է, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով զուգորդված հարձակումը կատարվի ուրիշի գույքին տիրանալու նպատակով:

բ) Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին տիրանալու նպատակով հարձակումը, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով (եթե հանցավորը գիտակցել է այդ հանգամանքը), պետք է որակել որպես ավազակություն, այլ ոչ թե գողություն: Տվյալ դեպքում ամենևին էլ նշանակություն չունի հափշտակության հանգամանքի գիտակցումը այդ գույքի օրինական տիրապետողի կողմից: Իրավիճակն այլ է, երբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հանցավորը տիրանում է ուրիշի այնպիսի գույքին, որը նրա փաստացի տիրապետողը, հանցավորի համար ակնհայտ, ստացել է որպես պարգևատրություն (վարձատրություն) հանցագործության համար կամ կաշառք: Նման դեպքում արարքը պետք է որակվի միայն որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն: Այլապես կստացվի, որ քրեական օրենքը կոչված է պաշտպանելու հասարակական հարաբերությունների սուբյեկտների ինչպես օրինական, այնպես էլ անօրինական շահերը:

3. Բացահայտվել են ավազակությունների կրիմինալոգիական հետևյալ առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հանցավորության քննարկվող տեսակի դեմ պայքարի գործում.

ա) ՀՀ-ում գրեթե ամեն երրորդ ավազակությունը (31.3%-ը) կատարվում է բնակարան (առանձնատուն, ամառանոց) մուտք գործելով: Դրանցից 16.7%-ը կատարվում են սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի հետ ունեցած անձնական փոխհարաբերություններից կամ ծանոթությունից օգտվելու, 22.4%-ը՝ նշված անձանց անփութության (դռները կամ պատուհանները չկողպելու, անվտանգության ապահովման սարքավորումները չմիացնելու), իսկ 27.2%-ը՝ նրանց չափազանց դյուրահավատության (երբ հանցավորները ներկայանում են որպես պետական տարբեր մարմինների կամ բնակչության սպասարկման տարբեր ծառայությունների աշխատակիցներ) արդյունքում:

բ) Ավազակությունների 50%-ից ավելին կատարվում են այն ժամերին, երբ դեպքի վայրում մարդկանց գտնվելու հավանականությունը մեծ է: Դա պայմանավորված է ավազակների՝ հանցավոր նպատակին անպայմանորեն հասնելու ձգտմամբ: Բանն այն է, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության կամ դրա սպառնալիքի գործադրման ազդեցության տակ տուժողները պատրաստ են լինում տրամադրելու պահանջվող գույքը և հստակ մատնանշում են նյութական տարբեր արժեքների թաքստոցները կամ գտնվելու այլ վայրերը՝ դրանով իսկ ապահովագրելով իրենց կամ իրենց հարազատների կյանքն ու առողջությունը:

գ) Ավազակություն կատարողների կազմում հանցավոր առավել բարձր ակտիվությամբ աչքի են ընկնում 18-30 տարեկան տղամարդիկ, ովքեր հիմնականում ստացել են միջնակարգ կամ ոչ լրիվ միջնակարգ կրթություն, եղել են գործազուրկ կամ մշտական եկամուտի որևէ կոնկրետ աղբյուր չունեցող, հաճախ տառապել են մեղսունակությունը չբացառող հոգեկան տարբեր խանգարումներով, նախկինում դատապարտված են եղել տարբեր հանցագործությունների (հիմնականում՝ հափշտակությունների) համար, արարքը կատարել են ալկոհոլային կամ թմրանյութա-

յին հարբածության վիճակում, 2-3 հոգուց բաղկացած խմբի կազմում, և ում պահանջմունքները մեծ մասամբ կապված են եղել թանկարժեք իրեր, զարդեր, դրամ, կենցաղային նշանակության տարբեր առարկաներ, հագուստ ձեռք բերելու հետ: Ավազակությունից առավել հաճախ տուժում են միջին տարիքի, նյութապես ապահովված տղամարդիկ, ովքեր աչքի են ընկնում անծանոթների նկատմամբ չափազանց դյուրահավատությամբ և նյութական բարիքների պահպանության տարրական կանոնների անտեսմամբ:

դ) Ավազակություններին նպաստող գործոնների շարքում առանձնանում են միկրոմիջավայրում (ընտանիքում, ընկերական շրջապատում, ուսման և աշխատանքի վայրում) շահադիտական-անհատապաշտական մոտիվացիայի ձևավորումը, հասարակությունում առկա բարոյահոգեբանական մթնոլորտի վատթարացումը և շահամոլության, մորթապաշտության հոգեբանության տարածումը, հակահասարակական կենսակերպի խթանումը, արժեքային կողմնորոշումների դեֆորմացումը և ալկոհոլամոլության, թմրամոլության ու խաղամոլության տարածումը, բնակարանների, պահեստարանների և շինությունների տեխնիկական թույլ պաշտպանվածությունը, հանգստյան տներում, հյուրանոցներում, շենքերի բակերում կողմնակի, անծանոթ անձանց նկատմամբ հսկողության անբավարարությունը կամ ընդհանրապես բացակայությունը, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի իրացման դեմ պայքարի թերություններն ու բացթողումները, բնակչության մոտ չգրանցված զենքի մեծ քանակության առկայությունը և ապօրինի զենքի շրջանառության անվերահսկելիությունը, ինչպես նաև տուժողի կողմից հրահրող, պրովոկացնող վարքագծի որոշակի դրսևորումները, կապված անշրջահայացության, հարբածության և այլ հանգամանքների հետ:

4. Ավազակությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ է հատուկ-կրիմինալոգիական բնույթի հետևյալ միջոցառումների իրականացումը.

ա) Քրեական պատասխանատվություն նախատեսել որպես զենք օգտագործվող այլ առարկաներն ակնհայտորեն առանց նպատակային այլ նշանակությամբ օգտագործելու մտադրության կրելու համար, ինչն էապես կնպաստի ոչ միայն ավազակությունների, այլև մի շարք այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կանխարգելմանը: Այդ կապակցությամբ շրջանառության մեջ պետք է մտցնել «վտանգավոր առարկաներ» հասկացությունը, որի իմաստով պետք է հասկանալ այն բոլոր առարկաները, որոնք իրենց կառուցվածքային և ֆիզիկական հատկություններով կարող են օգտագործվել մարդուն մահ կամ նրա առողջությանը վնաս պատճառելու նպատակով:

բ) Մշակել ավազակությունների կատարման առավել տարածված վայրերում (փողոցներում, պուրակներում, այգիներում, ռեստորաններում, սրճարաններում, շենքի բակերում, շքամուտքերում, բնակարաններում, առանձնատներում, ամառանոցներում և նման այլ վայրերում) անվտանգ վարքագծի հստակ առաջարկություններ և բնակչությանը տեղեկացնել դրանց կենսագործման նպատակահարմարության ու արդյունավետության մասին:

գ) Վերականգնել մասնագիտացված հասարակական կազմավորումների (կամավոր ժողովրդական դրուժինաների, ընկերական դատարանների, հանրային տեսուչների, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում գոր-

Եզրակացության մեջ ընդհանրացված ձևով ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

1. Ավազակության հանցակազմի օրենսդրական ներկայիս ձևակերպման կատարելագործման ուղղությամբ անհրաժեշտ է, նախ, տվյալ հանցագործությունը սահմանել ոչ թե որպես ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, այլ՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հափշտակություն:

2. Քանզի ավազակության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հարձակման նպատակը, ապա տվյալ հանցագործության որակման համար որևէ նշանակություն չունի արարքի կատարման շարժառիթը: Ուստի ավազակությունը կարող է կատարվել ինչպես շահադիտական, այնպես էլ այլ շարժառիթներով (օրինակ՝ վրեժի, ինքնահաստատման): Կարևորն այն է, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով զուգորդված հարձակումը, թեև, նշված շարժառիթներով, բայց կատարվի ուրիշի գույքին տիրանալու նպատակով:

3. Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին տիրանալու նպատակով հարձակումը, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով (եթե հանցավորը գիտակցել է այդ հանգամանքը), պետք է որակել որպես ավազակություն, այլ ոչ թե գողություն: Տվյալ դեպքում ամենևին էլ նշանակություն չունի հափշտակության հանգամանքի գիտակցումը այդ գույքի օրինական տիրապետողի կողմից: Իրավիճակն այլ է, երբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հանցավորը տիրանում է ուրիշի այնպիսի գույքին, որը նրա փաստացի տիրապետողը, հանցավորի համար ակնհայտ, ստացել է որպես պարգևատրություն (վարձատրություն) հանցագործության համար կամ կաշառք: Նման դեպքում արարքը պետք է որակվի միայն որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն: Այլապես կստացվի, որ քրեական օրենքը կոչված է պաշտպանելու հասարակական հարաբերությունների սուբյեկտների ինչպես օրինական, այնպես էլ անօրինական շահերը:

4. Ավազակությունների կրիմինալոգիական առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հանցավորության քննարկվող տեսակի դեմ պայքարի գործում հետևյալներն են.

1) ՀՀ-ում գրեթե ամեն երրորդ ավազակությունը (31.3%-ը) կատարվում է բնակարան (առանձնատուն, ամառանոց) մուտք գործելով: Դրանցից 16.7%-ը կատարվում են սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի հետ ունեցած անձնական փոխհարաբերություններից կամ ծանոթությունից օգտվելու, 22.4%-ը՝ նշված անձանց անփութության (դռները կամ պատուհանները չկողպելու, անվտանգության ապահովման սարքավորումները չմիացնելու), իսկ 27.2%-ը՝ նրանց չափազանց դյուրահավատության (երբ հանցավորները ներկայանում են որպես պետական տարբեր մարմինների կամ բնակչության սպասարկման տարբեր ծառայությունների աշխատակիցներ) արդյունքում:

2) Ավազակությունների 50%-ից ավելին կատարվում են այն ժամերին, երբ դեպքի վայրում մարդկանց գտնվելու հավանականությունը մեծ է: Դա պայմանավոր-

յին պայմանների բարելավումը, գ) թափառաշրջիկության և մուրացկանության դեմ պայքարի ուժեղացումը, դ) երկրում քաղաքական կայունության ապահովումը, ե) բնակչության իրավական դաստիարակության ընդլայնումն ու կատարելագործումը, զ) տնտեսության ոլորտը կարգավորող օրենսդրության և դրա կենսագործման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության նկատմամբ հարգանքի, ինչպես նաև ապօրինի ճանապարհով հարստացման և ստվերային տնտեսության նկատմամբ բացասական, մերժողական վերաբերմունքի ձևավորումը, է) ազգաբնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովման և կարիքավորության ու չքավորության նվազեցման խնդիրների կարգավորմանն ուղղված աշխատանքների պատշաճ կազմակերպումը և կենսագործումը:

Այս առումով, ըստ հեղինակի, կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև կազմակերպական հետևյալ հարցերի լուծումը՝

– զբաղվածության ապահովման և գործազրկության նվազեցման հստակ մեխանիզմների ու կառուցակարգերի մշակումը և ներդնումը,

– անապահով ընտանիքներին սոցիալական օգնության նոր, առավել գործուն, կենսունակ և արդարացի ծրագրերի նախագծումն ու իրականացումը,

– պետության կողմից իրականացվող ընտանեկան քաղաքականության հստակեցումը և ընտանիքի, մայրության ու մանկության սոցիալական աջակցության և արժանապատիվ սպասարկման ապահովումը,

– հարբեցողության, ալկոհոլամոլության և թմրամոլության դեմ պայքարի ուժեղացման արդիական ծրագրերի մշակումն ու կենսագործումը:

Քննարկվող գլխի **երկրորդ պարագրաֆում՝ «Ավազակության դեմ պայքարի հատուկ-կրիմինալոգիական միջոցները»**, ատենախոսը նշում է, որ կանխման հատուկ միջոցները, ի տարբերության ընդհանուր-սոցիալականների, նախ և առաջ բնութագրվում են նրանով, որ ուղղակիորեն, անմիջականորեն ուղղված են հանցագործությունների (տվյալ դեպքում՝ ավազակությունների) դեմ պայքարին: Այդ իմաստով շեշտվում է, որ ավազակությունների հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման խնդիրները լուծվում են բազմաթիվ պետական և ոչ պետական, մասնագիտացված և ոչ մասնագիտացված սուբյեկտների կողմից:

Ավազակությունների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հեղինակն առաջարկում է քննարկվող հանցագործությունների հատուկ կանխման միջոցներն իրականացնել հետևյալ ուղղություններով՝

– սոցիալական հսկողության ապահովում այն անձանց նկատմամբ, ում վարքագիծն ու առանձնահատկությունները վկայում են նրանց կողմից շահադիտական-բռնի հանցանք կատարելու հնարավորության մասին,

– վարչական հսկողություն նախկինում նման հանցանքներ կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ,

– օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ուղղված նախապատրաստվող ավազակությունները և դրանց հավանական կատարողներին բացահայտելուն, ինչպես նաև դրանք կանխելուն կամ խափանելուն,

– կատարված ավազակությունների բացահայտում և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ապահովում,

– ավազակության համար պատիժ կրող անձանց ուղղման հատուկ միջոցառումների իրականացում,

– ավազակությունների վիկտիմալոգիական կանխարգելում:

ծող պրոֆիլակտիկայի խորհուրդների, ըստ բնակության վայրի հասարակական կարգի պահպանության կետերի, իրավախախտումների հակում ունեցող անչափահասների հանրային դաստիարակների և այլն) գործունեությունը՝ նրանց հանցավորության (այդ թվում՝ ավազակությունների) կանխարգելմանը լայնորեն ներգրավելու նպատակով:

Աշխատության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ու նորմատիվ իրավական ակտերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ընդգծվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, քննարկվող թեմային առնչվող հիմնախնդիրների մշակվածության աստիճանը և գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, պարզաբանվում են հետազոտության մեթոդական, տեսական և փորձառնական հիմքերը, դրա տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Ավազակության քրեաիրավական բնութագիրը»**, պարունակում է չորս պարագրաֆ:

Տվյալ գլխի **առաջին պարագրաֆում՝ «Ավազակության հասկացությունն ըստ ՀՀ և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության»**, հեղինակը ներկայացնում է ավազակության հանցակազմը բնորոշող օրենսդրական ձևակերպումների առանձնահատկություններն ըստ ՀՀ և արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսգրքերի:

Նշվում է, որ նախկին ԽՍՀՄ պետություններից միայն Լատվիայի և Լիտվայի քրեական օրենսգրքերում է, որ ավազակությունը նախատեսված է նյութական հանցակազմով, այսինքն՝ որպես համապատասխան եղանակով ուրիշի գույքի հափշտակություն, այլ ոչ թե այն կատարելու նպատակով հարձակում: Ընդ որում, նշված երկու երկրների օրենքներով էլ, նրա խոսքերով, ավազակության հանցակազմն առկա է ֆիզիկական կամ հոգեկան բռնության գործադրման ցանկացած դեպքում, անկախ կյանքի կամ առողջության համար դրանց վտանգավոր լինել-չլինելուց:

Եվրոպական զարգացած երկրների շարքում, որոնց քրեական օրենսգրքերով ավազակությունը նախատեսված է ինքնուրույն հանցակազմերով, հեղինակն առանձնացնում է Գերմանիան և Շվեյցարիան: Այդ առումով նա քննադատում է Գերմանիայի քրեական օրենսգրքի համապատասխան դրույթը, որով ավազակության պարտադիր հատկանիշների շարքում նախատեսվում է հանցագործության առարկան՝ ուրիշի շարժական գույքը, և կարծիք արտահայտում, որ դժվար է պատկերացնել ուրիշի անշարժ գույքի հափշտակությունը ավազակության եղանակով:

Վերլուծելով Շվեյցարիայի քրեական օրենսգրքում առկա համապատասխան ձևակերպումները՝ ատենախոսը հետևություն է անում, որ տվյալ երկրում, ինչպես և Գերմանիայում, Լատվիայում և Լիտվայում, ավազակությունը նախատեսված է նյութական հանցակազմով: Հետևաբար հափշտակություն կատարելու նպատա-

կով բռնությամբ զուգորդված հարձակումը, որը խափանվում է հանցավորի կամքից անկախ հանգամանքներով, նշված երկրներում պետք է որակվի որպես ավազակության փորձ:

Նշվում է նաև, որ եվրոպական բազմաթիվ այլ երկրների (Դանիա, Ֆրանսիա, Իսպանիա, Նիդերլանդներ, Շվեդիա և այլն) քրեական օրենսգրքերում ավազակությունը չի առանձնացվում ինքնուրույն հանցակազմով: Նշված դեպքերում խոսքը բռնություն կիրառելով կատարվող գողությունների կամ կողոպուտների մասին է:

Հեղինակն անդրադառնում է նաև ավազակության՝ Չինաստանի, ԱՄՆ-ի և մուսուլմանական որոշ երկրների քրեական օրենքներով նախատեսված առանձնահատկությունների քննարկմանը՝ ընդգծելով, որ այդ երկրների քրեական օրենսգրքերը նույնպես չեն պարունակում տավյալ արարքը նախատեսող ինքնուրույն հանցակազմեր:

Նույն գլխի **երկրորդ պարագրաֆում՝ «Ավազակության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները»**, ատենախոսն անդրադառնում է ավազակության օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների քննարկմանը:

Հեղինակը քննարկում է այն դեպքերը, երբ հարձակումը, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով, կատարվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին տիրանալու նպատակով: Վերլուծելով տվյալ իրավիճակը՝ նա հանգում է հետևության, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին տիրանալու նպատակով հարձակումը, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով (եթե հանցավորը գիտակցել է այդ հանգամանքը), պետք է նույնպես որակել որպես ավազակություն, այլ ոչ թե գողություն: Իրավիճակը, ըստ նրա, այլ է, երբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հանցավորը տիրանում է ուրիշի այնպիսի գույքին, որը դրա փաստացի տիրապետողը, հանցավորի համար ակնհայտ, ստացել է որպես պարգևատրություն (վարձատրություն) հանցագործության համար կամ կաշառք: Նման դեպքերում, հեղինակի կարծիքով, արարքը պետք է որակել միայն որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն, քանզի այլապես կստացվի, որ քրեական օրենքը կոչված է պաշտպանելու հասարակական հարաբերությունների սուբյեկտների ինչպես օրինական, այնպես էլ անօրինական շահերը:

Ատենախոսն առաջարկում է ավազակությունը սահմանել որպես ուրիշի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հափշտակություն: Բացի այդ, ընդգծվում է ՀՀ քր. օր.-ում «կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն» հասկացության բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Իսկ բոլոր այն հոդվածներում, որտեղ հարձակումը նախատեսված է որպես հանցագործության եղանակ, առաջարկվում է հրաժարվել «հարձակում» եզրույթից և փոխարինել այն «բռնություն», «բռնություն գործադրելու սպառնալիք» կամ, ըստ անհրաժեշտության, «ուրիշի գույքի ոչնչացում կամ վնասում» և «ուրիշի գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք» հասկացություններով:

նշվում են նաև հասարակական հարաբերություններում առկա հակասությունները, ճգնաժամային տարբեր երևույթներով պայմանավորված՝ տնտեսության զարգացման ծայրահեղ անբարենպաստ պայմանները, հոգևոր ոլորտի արժեզրկումը, աճող սերնդի դաստիարակության հետ կապված գործունեության թերություններն ու բացթողումները և այլն:

Ավազակություններին նպաստող առավել բնութագրական գործոնները, հեղինակի խոսքերով, կապված են նշված հանցագործությունների իրադրության և հատկապես՝ հանցանք կատարելու որոշում կայացնելու վրա էական ազդեցություն ունեցող հանգամանքների, հետ, որոնց շարքում կարելի է հատուկ առանձնացնել հանցագործության վայրի (փողոցի, շենքի շքամուտքի և այլն) վատ լուսավորությունը, ինչպես նաև տվյալ վայրում հնարավոր վկաների (այլ անձանց) բացակայությունը, սեփական ունեցվածքի (բնակարանի, գրասենյակի այլ շինության) պահպանության արդյունավետ միջոցների բացակայությունը, իրավապահ մարմինների կողմից համապատասխան վայրերում հասարակական կարգի ապահովման հետ կապված թերություններն ու բացթողումները: Որոշակի էական ազդեցություն կարող են ունենալ նաև տուժողի հրահրող, պրովոկացնող վարքագծի որոշակի դրսևորումները, անշրջահայացությունը, հարբածությունը և նման այլ հանգամանքներ:

Ավազակություններին նպաստող գործոնների շարքում առանձնացվում են նաև որոշակի կատեգորիայի անձանց մոտ չգրանցված զենքի մեծ քանակության առկայությունը և ապօրինի զենքի շրջանառության անվերահսկելիությունը: Այդ առումով, հեղինակի խոսքերով, որոշակի մտահոգության տեղիք են տալիս համապատասխան կառույցներում (ոստիկանություն, զորամասեր և այլն) ծառայական և մարտական զենքի պահպանության կանոնների հաճախակի խախտումները և բնակչության մոտ գտնվող ապօրինի զենքի բացահայտման և առգրավման ուղղությամբ իրավապահ մարմինների գործունեության անարդյունավետությունը: Սակայն նշվում է, որ Հայաստանում բազմաթիվ են նաև օրինական զենքով ավազակություններ կատարելու դեպքերը, ինչի հիմնական պատճառներից են օրինական զենք ձեռք բերելու հնարավորությունների չափազանց ընդլայնումը և զենքի օրինական շրջանառության կանոնների հաճախակի խախտումները:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝ «Պայքարն ավազակության դեմ»**, բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում՝ «Ավազակության դեմ պայքարի ընդհանուր-սոցիալական միջոցները», հեղինակը նշում է, որ այսօրվա իրականության մեջ ընդհանուր-սոցիալական մակարդակի վրա ի հայտ են գալիս հանցավորության դեմ պայքարի լրացուցիչ հնարավորություններ, որոնք կապված են ՀՀ-ում իրականացվող տնտեսական և այլ բարեփոխումների դրական կողմերի հետ: Ավելին, ըստ ատենախոսի, շարունակում է անհերքելի մնալ շատ մասնագետների կողմից առաջ քաշված այն թեզը, որ կանխարգելիչ միջոցների համակարգում հանցավորության ընդհանուր-սոցիալական կանխումը հիմնարար, ելակետային տեղ է զբաղեցնում:

Այդ իմաստով հեղինակը հատկապես կարևորում է ավազակությունների կանխման գործում էական նշանակություն ունեցող ընդհանուր-սոցիալական հետևյալ միջոցառումները՝ ա) տնտեսական ճգնաժամի հաղթահարումը և իրական արժեզրկման մակարդակի նվազեցումը, բ) բնակչության բեռնաթափման մեղմումը, գործազրկության մակարդակի նվազեցումը և անապահով ընտանիքների կենցաղա-

(53.2%): Վերջիններիս հաջորդում են մշտական եկամուտի կոնկրետ աղբյուր չունեցողները (23.8%):

Ատենախոսի ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ ավազակությունների 60%-ից ավելին կատարվել են ալկոհոլային կամ թմրանյութային հարբածության վիճակում: Ընդ որում, առավել հաճախ ավազակները գործել են ալկոհոլի, այլ ոչ թե թմրեցնող կամ հոգեմետ կամ թունավոր նյութերի ազդեցության տակ:

Բացի այդ, ավազակություն կատարողների մոտ 30%-ը տառապել են մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումներով. ալկոհոլամոլությամբ (49.2%), փսիխոպատիայով (14.3%), գանգ-ուղեղային վնասվածքների մնացորդային երևույթներով (9.1%), կենտրոնական նյարդային համակարգի օրգանական հիվանդություններով (8.4%), օլիգոֆրենիայով (7.8%), թմրամոլությամբ (6.3%) և շիզոֆրենիայով (4.9%):

Ավազակություն կատարողների քրեաիրավական առանձնահատկությունների առումով ատենախոսը նշում է, որ նրանց 68.7%-ը նախկինում դատապարտված են եղել տարբեր հանցագործությունների համար: Վերջիններիս ավելի քան 90%-ը դատապարտված են եղել գույքային բնույթի հանցագործությունների (հիմնականում՝ հափշտակությունների) համար: Ընդ որում, նախկինում դատապարտվածների կողմից կատարվող ավազակությունները աչքի են ընկնում տուժողների կյանքի կամ առողջության համար առավել մեծ վտանգավորությամբ:

Տվյալ պարագրաֆի շրջանակներում հեղինակն անդրադառնում է նաև ՀՀ-ում կատարվող ավազակություններից տուժողների սոցիալ-ժողովրդագրական, դերային և այլ հատկություններին ու նշում, որ այդ անձինք նույնպես բնութագրվում են որոշակի առանձնահատկություններով, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել քննարկվող հանցագործություններին նպաստող գործոնները բացահայտելու և դրանց դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս առումով իրականացված հետազոտության արդյունքում նա առաջարկում է նաև քննարկվող հանցագործություններից տուժողների հետևյալ տիպաբանական դասակարգումը՝ ա) պատահական տուժող, բ) անփույթ տուժող, գ) դյուրահավատ տուժող, դ) բացասական տուժող:

Երկրորդ գլխի **երրորդ պարագրաֆում՝ «Ավազակություններին նպաստող գործոնները»**, ատենախոսն անդրադառնում է քննարկվող հանցագործությունների պատճառներին և նպաստող պայմաններին:

Նշվում է, որ ՀՀ-ում կատարվող ավազակությունների վրա էական ազդեցություն ունեցող գործոնների շարքում առաջին հերթին պետք է առանձնացնել սոցիալ-տնտեսական պատճառներն ու պայմանները: Աղքատությունը, հասարակության բևեռացումը, ըստ հեղինակի, հանցավորության, հատկապես՝ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների, հզոր դետերմինանտներ են: Սակայն աղքատությունը ինքնին դեռ չի կարող համարվել հանցավորությունը պայմանավորող հիմնական և գլխավոր գործոն: Այս առումով առավել մեծ հանցածին ծանրաբեռնվածություն է կրում բնակչության սոցիալ-տնտեսական շերտավորումը, որը վերջին տարիներին Հայաստանում հասել է աննախադեպ չափերի: Իսկ նման իրավիճակը, ուղեկցվելով անարդարության և կյանքը բարելավելու անհնարինության զգացումների տարածմամբ, պարարտ հող է ստեղծում սոցիալական լարվածության և տագնապայնության մակարդակների բարձրացման համար:

Շահադիտական-բռնի հանցավորության ընդհանուր պատճառների թվում

Հեղինակը նշում է նաև, որ ավազակության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է միայն նպատակը: Ուստի տվյալ հանցագործության որակման համար որևէ նշանակություն չունի արարքի կատարման շարժառիթը: Կարևորն այն է, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով զուգորդված հարձակումը կատարվի ուրիշի գույքին տիրանալու նպատակով:

Առաջին գլխի **երրորդ պարագրաֆում՝ «Ավազակության ծանրացնող հանգամանքները»**, ատենախոսն անդրադարձ է կատարում ավազակության առավել և առանձնապես վտանգավոր տեսակների օրենսդրական ձևակերպումներին՝ քննարկելով դրանց առանձնահատկությունները: Հաշվի առնելով խմբակային հանցավորության առավել բարձր հանրային վտանգավորությունը՝ հեղինակն առաջարկում է փոփոխել ՀՀ քր. օր.-ի համապատասխան դրույթն այնպես, որ տվյալ կետով պատասխանատվություն սահմանվի ավազակության համար, որը կատարվել է, այդ թվում՝ առանց նախնական համաձայնությամբ խմբի կողմից:

Բացի այդ, ատենախոսը հիմնավորում է ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ում զենքից բացի նաև պայթուցիկ նյութերն ու պայթուցիկ սարքերը նախատեսելու անհրաժեշտությունը, իսկ որպես զենք օգտագործվող այլ առարկաների շարքն առաջարկում է դասել, այդ թվում՝ դյուրավառ հեղուկները և ուժեղ ներգործող թունավոր նյութերը: Միաժամանակ, ըստ նրա, զենք ասելով՝ ավազակության հանցակազմում պետք է հասկանալ բոլոր այն սարքերը և առարկաները, որոնք իրենց կառուցվածքով նախատեսված են կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ ազդանշան արձակելու համար և որևէ վտանգ են ներկայացնում մարդու կյանքին կամ առողջությանը (այդ թվում՝ օդաճնշիչ, գազային, ազդանշանային զենքը):

Քննարկվող գլխի **չորրորդ պարագրաֆում՝ «Ավազակության սահմանազատումը հարակից հանցագործություններից»,** ատենախոսն անդրադառնում է ավազակությունը սեփականության դեմ ուղղված որոշ հանցագործություններից և ծովահենությունից, ինչպես նաև կազմակերպված զինված խմբի կողմից կատարված ավազակությունը բանդիտիզմից սահմանազատելու հիմնախնդիրներին:

Հեղինակի կարծիքով, ավազակությունը և բռնությամբ զուգորդված կողոպուտը սահմանազատվում են, նախ և առաջ, ըստ գործադրվող բռնության բնույթի. կողոպուտի դեպքում խոսքը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր, իսկ ավազակության դեպքում, հակառակը՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի մասին է: Սակայն նշվում է, որ, թեև սահմանազատման տվյալ չափանիշն օրենսդրորեն հստակ սահմանված է, այնուամենայնիվ, իրավակիրառական պրակտիկայում հանդիպում են սխալ որակման դեպքեր՝ կապված բռնության բնույթը գնահատելու հետ, հատկապես, երբ արարքը կատարվում է բռնություն գործադրելու սպառնալիքով: Հեղինակի խոսքերով, կարող են տարբերվել նաև ուրիշի գույքին տիրանալու եղանակները. եթե կողոպուտի դեպքում այն միշտ բացահայտ է, ապա ավազակության դեպքում ուրիշի գույքին կարող են տիրանալ նաև գաղտնի:

Ատենախոսը նշում է, որ տեսության մեջ և իրավակիրառական պրակտիկայում առկա որոշ խնդիրներ կապված են նաև ավազակության ու շորթման հանցակազմերի սահմանազատման հետ: Մասնավորապես, ընդգծվում են հետևյալ չափանիշները՝ 1) ավազակության դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը գործա-

դրվում են որպես գույքը վերցնելու կամ այն պահելու միջոց, մինչդեռ շորթման ժամանակ բռնությունը կամ դրա սպառնալիքը հանդիսանում են տուժողի կամքի վրա ներգործելու, այն ճնշելու միջոց, 2) ավազակության ժամանակ գույքին տիրանալը տեղի է ունենում բռնության կամ դրա սպառնալիքի հետ միաժամանակ կամ դրա գործադրումից անմիջապես հետո, իսկ շորթման դեպքում հանցավորը ցանկանում է գույքը ստանալ հետագայում, 3) շորթման ժամանակ, ի տարբերություն ավազակության, սպառնալիքը կարող է լինել անգամ քողարկված, սակայն բոլոր դեպքերում տուժողին պետք է հասկանալի լինի դրա փաստական իմաստը և տուժողը պետք է ընկալի դա իրականացնելու անխուսափելիությունը, 4) ավազակության ժամանակ հանցավորը գույքը վերցնում է դրա օրինական տիրապետողի կամքին հակառակ, իսկ շորթողին տուժողն ինքն է գույք հանձնում, չնայած դա անում է հարկադրված՝ սպառնալիքի կամ բռնության ազդեցության տակ, 5) եթե շորթողի պահանջը չի կատարվում և հանցավորը, մերժում ստանալով, անմիջապես բռնություն է գործադրում ու վերցնում գույքը, ապա շորթումը, կախված գործադրած բռնության կամ դրա սպառնալիքի բնույթից, վեր է ածվում ավազակության կամ ծանրացուցիչ հանգամանքներով կողոպուտի, 6) եթե շորթողի պահանջը չի կատարվում, և որոշ ժամանակ անց նա բռնությամբ կամ դրա սպառնալիքով վերցնում է ուրիշի գույքը, հանցավորի գործողությունները որակվում են համակցությամբ՝ շորթում և ավազակություն կամ կողոպուտ:

Ավազակությունը հարակից այլ հանցագործություններից սահմանազատելու կապակցությամբ ատենախոսը նշում է հետևյալը. 1) ծովահենությունից ավազակությունը տարբերվում է հանցագործության օբյեկտով և հանցանքը կատարելու տեղով, իսկ ծովահենության առարկա կարող են հանդիսանալ միայն ծովային կամ գետային նավի ուղևորների կամ անձնակազմի անդամների գույքը, տեղափոխվող գույքը, ինչպես նաև նավն ամբողջությամբ կամ դրա առանձին մասերը, 2) կազմակերպված խմբի կողմից զենքի գործադրմամբ կատարված ավազակությունը բանդայի հարձակումներին մասնակցելու ձևով բանդիտիզմի բաղկացուցիչ մաս է և պետք է որակվի միայն որպես բանդիտիզմ:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝ «Ավազակությունը որպես կրիմինալոգիական հիմնախնդիր»** բաղկացած է երեք պարագրաֆից:

Տվյալ գլխի **առաջին պարագրաֆում՝ «Ավազակությունների ընդհանուր կրիմինալոգիական բնութագիրը»** ատենախոսը քննարկում է ՀՀ-ում կատարվող ավազակությունների որակական և քանակական հիմնական ցուցանիշները: Ըստ նրա, ավազակությունների վերջին տարիների միտումները ՀՀ-ում բավականին անբարենպաստ են. գրանցված հանցագործությունների ընդհանուր թվում դրանց մասնաբաժինը միջին հաշվարկով կազմում է 1.01%: Ընդ որում, ընդհանուր հանցավորության կառուցվածքում ավազակություններն առավելագույն մասնաբաժինն ունեցել են 2008 թվականին (1.36%), իսկ նվազագույնը՝ 2002 թվականին (0.68%):

Միաժամանակ նշվում է, որ ավազակությունների մակարդակը պայմանավորված է դրանց պաշտոնական գրանցման գործընթացով: Հեղինակի հետազոտությունը ցույց է տվել, որ ներկայումս ՀՀ-ում ավազակությունների լատենտայնության մակարդակը բավականին բարձր է: Դրանք իրականում գրանցվում են ավելի հազվադեպ, քան փաստացի կատարվում են:

Ատենախոսն ընդգծում է նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում ավազակային հարձակումները գլխավորապես ուղղված են անձնական սեփականության դեմ: Նա հետևություն է անում, որ ՀՀ-ում ավազակություններից պաշտպանվածության առումով առավել խոցելի է անձնական սեփականության ոլորտը:

Վերլուծվում են նաև քննարկվող հանցագործությունների գրանցման և բացահայտման հարաբերակցության վերաբերյալ տվյալները: Այսպես, վերջին տարիներին գրանցված ավազակությունների բացահայտման ցուցանիշը գրեթե չի գերազանցում 60%-ը: Բացառություն է կազմում միայն 2010թ., երբ բացահայտվել է գրանցված ավազակությունների 63.6%-ը:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում ավազակությունների մասնաբաժնի կապակցությամբ ատենախոսը նշում է, որ այն, միջին հաշվարկով, կազմում է 2.66%:

Ընդգծվում է նաև, որ ավազակությունները մեծ մասամբ կատարվում են տուժողների բնակարաններում, առանձնատներում կամ ամառանոցներում: Բացի այդ, քննարկվող հանցագործությունները մոտ հինգ անգամ ավելի հաճախ են կատարվում քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, քան գյուղական վայրերում, ինչը, հեղինակի կարծիքով, պայմանավորված է քաղաքային կյանքի առավել հանցածին պայմաններով. բնակչության մեծ մասը կենտրոնանում է քաղաքներում, ինչն ուղեկցվում է ինտենսիվ միգրացիոն գործընթացներով, քաղաքաբնակների մեկուսացմամբ, սոցիալական վերահսկողության թուլացմամբ:

Քննարկվող գլխի **երկրորդ պարագրաֆում՝ «Ավազակություն կատարողների և դրանից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները»** բնութագրվում են նշված անձանց սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական առանձնահատկությունները:

Ավազակություն կատարողների սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների կապակցությամբ նախ և առաջ նշվում է, որ տղամարդիկ զգալիորեն գերակայում են: Սակայն վերջին տարիներին նկատվում է կանանց մասնաբաժնի աճի միտում: Նրանք, որպես կանոն, հանդես են գալիս հանցագործության օժանդակողի դերում:

Քննարկվող անձանց տարիքային առանձնահատկությունների առումով նշվում է, որ ավազակություն կատարողների կազմում հանցավոր առավել բարձր ակտիվությամբ հատկապես աչքի են ընկնում 18-24 (43.2%) և 25-30 (30.5%) տարիքային խմբերի ներկայացուցիչները: Դա բացատրվում է նրանով, որ հենց նշված տարիքում է հիմնականում անհրաժեշտություն առաջանում լուծելու կենսականորեն առավել կարևոր խնդիրները: Կյանքի հենց այդ տարիներին են բաժին ընկնում անձամիջյան շփման առավել բարդ իրադրությունները և կոնֆլիկտները: Հենց նշված տարիքային խմբերի ներկայացուցիչներն են առավել հաճախ չարաշահում ալկոհոլը և թմրանյութերը:

ՀՀ-ում ավազակություն կատարողների կրթական մակարդակի կապակցությամբ նշվում է, որ նրանք հիմնականում ստացել են միջնակարգ (48.3%) կամ ոչ լրիվ միջնակարգ (23.2%) կրթություն: Բարձրագույն կրթություն ունեցողների մասնաբաժինը նրանց կազմում համեմատաբար փոքր է՝ 7.6%: Ընդ որում, վերջիններս աչքի են ընկնում առավել հանդգնությամբ և ցինիզմով:

Ավազակություն կատարողների զբաղվածության կապակցությամբ նշվում է, որ նրանց ընդհանուր կազմում մեծամասնություն են կազմում գործազուրկները